



ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ COVID-19-Ի ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանրային Առողջության Հրամանը Շտապ Կարանտինի Վերաբերյալ

Վերանայված հրամանը հրապարակվել է 2022թ.-ի մայիսի 18-ին:
Ուժի մեջ է մտել հինգշաբթի, 2022 թվականի մայիսի 19-ին՝
կեսգիշերվա ժամը 00:01-ին

Այս Հրամանը փոխարինում է Հանրային Առողջության Վարչության Շտապ Կարանտինի
Վերաբերյալ 2022թ.-ի ապրիլի 13-ի Հրամանին:

Այս Հրամանն ուժի մեջ է մինչև Առողջության Պատասխանատուի կողմից չեղյալ
հայտարարվելը:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՀՐԱՄԱՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:

Կարևոր Կետերի Համառոտ Նկարագրություն (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

5/18/2022:

- Պարզաբանվում է, որ ախտանիշներ չունեցող անձինք, որոնք շփվել են COVID-19-ով վարակված որևէ անձի հետ (սերտ շփում ունեցած անձինք՝ առանց ախտանիշների), ազատվում են կարանտին պահպանելու պահանջից՝ անկախ պատվաստման կարգավիճակից: Այնուամենայնիվ, նրանցից պահանջվում է հետևել ստորև նշված պահանջներին. հրամանը նշում է, որ բարձր վտանգավորության վայրերում ապրող կամ աշխատող որոշ մարդիկ պետք է հետևեն աշխատավայրին հատուկ աշխատանքային սահմանափակումների կամ աշխատանքի չգնալու վերաբերյալ սահմանված պահանջներին: Այլ վայրերում աշխատող անձանցից պահանջվում է հետևել Cal/OSHA-ի աշխատանքի չգնալու և/կամ աշխատանքի վերադառնալու պահանջներին:
- Նշվում է, որ COVID-19-ի թեստավորման պահանջից ազատվում են ախտանիշներ չունեցող անձինք, որոնց COVID-19-ի վիրուսային թեստի արդյունքը նախկինում՝ վերջին 90 օրվա ընթացքում, եղել է դրական և ապաքինվել են, և եթե չունեն ախտանիշներ:
- Նշվում է, որ սերտ շփում ունեցած բոլոր անձինք՝ անկախ պատվաստման կարգավիճակից, 10 օր պետք է կրեն բարձր պաշտպանության դիմակ փակ տարածքներում ուրիշների շրջապատում գտնվելիս և բացօթյա տարածքներում ուրիշներին մոտ գտնվելիս:

ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՀԵՏԵՎԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒԻ ԱՅՍ ՀՐԱՄԱՆԻՆ

Բոլոր անձանցից, ովքեր բնակվում կամ աշխատում են Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Իրավասության շրջանում և շփվել են COVID-19-ով ախտորոշված անձի հետ (սերտ շփում ունեցած անձինք)՝ անկախ նրանից՝ նրանք ազատված են կարանտին պահպանելուց, թե ոչ, պահանջվում է հետևել այս Հրամանի այն պահանջներին, որոնք վերաբերում են իրենց իրավիճակին և կարանտին պահպանելու պահանջներին՝ **ինչպես նշված է ստորև:**

Այս հրամանը չի վերաբերում առողջապահական հաստատություններում աշխատող և վարակի հետ շփված անձնակազմի վերահսկմանը, ինչպես նաև չի վերաբերում վարակի հետ շփված Շտապ Բժշկական Ծառայությունների այն աշխատակիցների վերահսկմանը, որոնք աշխատում են նախահիվանդանոցային կամ առողջապահական հաստատություններում: Վարակի հետ շփված բուժանձնակազմը պետք է ծանոթանա [Վարակի հետ Շփված, Ախտանիշներ Չունեցող Բուժաշխատողների \(HCP\) Համար Սահմանված Աշխատանքային Սահմանափակումներին](#): Շտապ Բուժօգնության Ծառայության անձնակազմը պետք է ծանոթանա [Վարակի հետ Շփված, Ախտանիշներ Չունեցող Շտապ Բուժօգնության Անձնակազմի \(EMS\) Համար Սահմանված Աշխատանքային Սահմանափակումներին](#):

Այս հրամանը չի վերաբերում նաև վարակի հետ շփված բնակիչների վերահսկմանը և, աշխատանքի սահմանափակումների կամ աշխատանքի չգնալու տեսանկյունից, բարձր վտանգավորության այլ սահմանված վայրերում վարակի հետ շփված անձնակազմի վերահսկմանը: Վարակի հետ շփված բնակիչները և աշխատակիցները հետևյալ բարձր վտանգավորության վայրերում պետք է հետևեն իրենց հաստատությանը վերաբերող պահանջներին:

- [Երկարատև ինամֆի կենտրոններ](#)
- [Մեծահասակների և Տարեգների ինամֆի Հաստատություններ](#)
- [Անօթևանների ապաստարաններ](#)
- [Ուղղիչ հաստատություններ և կայանավայրեր](#)
- [Հովազման կենտրոններ և շտապ օգնության ապաստարաններ](#)

Համաձայն Cal/OSHA-ի COVID-19-ի Արտակարգ իրավիճակների ժամանակավոր Չափանիշների (ETS)՝ այլ վայրերում աշխատող անձանցից, որոնք շփվել են վարակի հետ, պահանջվում է հետևել Cal-OSHA-ի՝ [պահանջներից ազատման պայմաններին և/կամ աշխատանքի վերադառնալու պահանջներին](#): Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի՝ [Աշխատավայրում COVID-19-ի Արձագանքը](#): Խնդրում ենք նկատի ունենալ, որ աշխատավայրում վարակի հետ շփման դեպքում Cal-OSHA-ն կիրառում է սերտ շփման այլ սահմանում:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ կրթական հաստատություններում վարակի հետ շփման դեպքում կարող է կիրառվել երեխաների/աշակերտների սերտ շփման այլ սահմանում: Տե՛ս <http://ph.lacounty.gov/acd/ncorona2019/parents>:

ՍԵՐՏ ՇՓՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԱՆՁԻՆԵ, ՈՐՈՆԵ ԱԶԱՏՎԱԾ ԵՆ ԿԱՐԱՆՏԻՆ ՊԱՅՊԱՆԵԼՈՒՑ

Անկախ ձեր պատվաստման կարգավիճակից՝ եթե դուք շփվել եք COVID-19-ով վարակված որևէ անձի հետ և չունեք ախտանիշներ, ձեզնից չի պահանջվում կարանտին պահպանել՝ առանձնապես մյուսներից:

Ձեզնից պահանջվում է՝

- a) Կրել բարձր պաշտպանության դիմակ փակ տարածքներում այլ անձանց շրջապատում գտնվելիս և բացօթյա տարածքներում այլ անձանց հետ սերտորեն (մինչև 6 ոտնաչափի սահմաններում) շփվելիս՝ COVID-19-ով վարակված անձի հետ վերջին շփումից հետո ընդհանուր 10 օր: Դիմակը պետք է լինի դեմքը լավ գրկող բժշկական դիմակ կամ դեմքը լավ գրկող շնչառական դիմակ (respirator) կամ դեմքը լավ գրկող բազմակի օգտագործման բարձր գտման դիմակ, որն ունի քթի հատվածում լար (Լավագույն պաշտպանությունն ապահովող դիմակների մասին մանրամասների համար տե՛ս ph.lacounty.gov/masks կայքէջը), և



- b) Թեստավորվել* վարակի հետ վերջին շփմանը հաջորդող 3-5 օրվա ընթացքում որոշելու համար ձեզ մոտ վարակի կարգավիճակը, [L](#)
(Խնդրում ենք նկատի ունենալ. եթե ձեր վիրուսային թեստի արդյունքը դրական է, հետևեք մեկուսացման բոլոր հրահանգներին, որոնք ներկայացված են ph.lacounty.gov/covidisolation կայքէջում)
- c) Հետևեք՝ արդյոք ձեզ մոտ ախտանիշներ առաջանում են վարակակրի հետ շփումից հետո 10 օր, [L](#)
(Խնդրում ենք նկատի ունենալ. եթե զարգանան ախտանիշներ, թեստավորվեք և մնացեք տանը՝ հեռու ուրիշներից: Եթե ձեր վիրուսային թեստի արդյունքը դրական է, հետևեք մեկուսացման բոլոր պահանջներին, որոնք ներկայացված են ph.lacounty.gov/covidisolation կայքէջում:
- d) Հետևեք COVID-19-ի Վարակակրի Հետ Սերտ Շփում Ունեցած Անձանց մյուս բոլոր հրահանգներին, որոնք հասանելի են անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով՝ ph.lacounty.gov/covidcontacts:

*Թեստավորում չի պահանջվում, եթե նախկինում՝ վերջին 90 օրվա ընթացքում, ձեր COVID-19-ի վիրուսային թեստի արդյունքը եղել է դրական և եթե չունեք ախտանիշներ:

Սերտ Շփում Ունեցած Անձանց՝ Կոնտակտավորների Սահմանում

Սույն հրամանի նպատակներից ելնելով՝ «սերտ շփում ունեցած անձը՝ կոնտակտավորը» սահմանվում է որպես անձ, որը վարակված անձի (լաբորատորիայում հաստատված կամ կլինիկական ախտորոշում ունեցող) հետ գտնվել է միևնույն օդային տարածքով վայրում, օրինակ՝ տանը, կլինիկայի սպասարահում, ինքնաթիռում և այլն, 24-ժամվա ընթացքում ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավել ժամանակով (օրինակ՝ 5 րոպե տևողությամբ երեք առանձին շփումներ վարակի հետ՝ ընդհանուր առմամբ 15 րոպե) վարակված անձի վարակող եղած ժամանակ:

Նկատի ունեցեք, որ «սերտ շփում ունեցած անձը՝ կոնտակտավորը» կարող է սահմանվել այլ կերպ, եթե դուք վարակի հետ շփվում եք աշխատավայրում, դպրոցում կամ բարձր վտանգավորության վայրում (24 ժամվա ընթացքում վարակող անձից գտնվելով մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա առնվազն 15 րոպե):

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Նվազեցրեք ձեր կողմից ուրիշներին COVID-19 փոխանցելու վտանգը

Սերտ շփում ունեցած բոլոր անձինք, անկախ նրանից՝ կարանտին են պահպանում, թե ոչ, պետք է քայլեր ձեռնարկեն՝ ուրիշներին COVID-19-ի փոխանցման վտանգը նվազեցնելու համար:

Սերտ շփում ունեցած բոլոր անձինք պետք է՝

- a. Կրեն բարձր պաշտպանության դիմակ փակ տարածքներում այլ անձանց շրջապատում գտնվելիս և բացօթյա տարածքներում այլ անձանց հետ սերտորեն շփվելիս ընդհանուր 10 օր: Սա ներառում է դիմակը տանը կրելը: Դիմակը պետք է լինի դեմքը լավ գրկող բժշկական դիմակ կամ դեմքը լավ գրկող շնչառական դիմակ (respirator) կամ դեմքը լավ գրկող բազմակի օգտագործման բարձր գտման դիմակ, որն ունի քթի հատվածում լար (Լավագույն պաշտպանությունն ապահովող դիմակների մասին մանրամասների համար տե՛ս ph.lacounty.gov/masks կայքէջը), և

b. Թեստավորվեն վարակի հետ վերջին շփմանը հաջորդող 3-5 օրվա ընթացքում՝ որոշելու համար վարակի կարգավիճակը: Թեստը պետք է լինի FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի վիրուսային թեստ, ինչպիսին է հակազենի կամ ՆԱԹ/ՊՇՌ (NAAT/PCR) թեստերը, ներառյալ ազատ վաճառվող, ինքնուրույն կատարվող թեստերը: Ծանոթություն. աշխատանքի վերադառնալու համար թեստավորման դեպքում հնարավոր է կարիք լինի թեստավորմանը հետևելու և այն հատուկ կարգով հաղորդելու: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր գործատուին և այցելեք [Cal-OSHA-ի Թեստավորման ՅՏՅ-ներ](#) կայքէջ:

Եթե դուք կամ ձեզ հետ ապրող որևէ անձ գտնվում եք/է [ծանր հիվանդանալու բարձր վտանգի խմբում](#), դիտարկեք հնարավորինս շուտ թեստավորվելը: Այնուհետև, եթե ձեր թեստի արդյունքը բացասական է, կրկին թեստավորվեք 5-րդ օրը կամ դրանից հետո:

Եթե ձեր թեստի արդյունքը դրական է, ծանոթացեք ստորև <<Եթե Ձեզ Սոտ Առաջանան COVID-19-ի Ախտանիշներ և/կամ Ստանաք Վիրուսային Թեստի Դրական Պատասխան>> բաժնին:

c. Վերահսկեք ձեր առողջական վիճակը վարակի հետ շփումից հետո 10 օր: Ախտանիշների զարգանալու դեպքում ծանոթացեք ստորև <<Եթե Ձեզ Սոտ Առաջանան COVID-19-ի Ախտանիշներ և/կամ Ստանաք Վիրուսային Թեստի Դրական Պատասխան>> [վերնագրված](#) բաժնին:

Ինչպես հաշվել օրերը. Օր 0-ն վարակի հետ ձեր վերջին շփման օրն է: 1-ին Օրը վարակի հետ ձեր վերջին շփմանը հաջորդող առաջին ամբողջական օրն է:

Կարանտին պահպանեք, եթե ազատված չեք այդ պահանջից

Եթե դուք ազատված չեք կարանտին պահպանելու պահանջից (տե՛ս [վերևում](#) <<Սերտ Շփում Ունեցած Անձինք, Որոնք Ազատված Են Կարանտին Պահպանելուց>> [վերնագրով բաժնի](#)), ձեզից պահանջվում է կարանտին պահպանել (մնալ ձեր տանը կամ այլ բնակավայրում և հեռու ուրիշներից): Դա պայմանավորված է նրանով, որ դուք շփվել եք COVID-19-ի հարուցիչ վիրուսի հետ և կարող եք վարակված լինել և վիրուսը փոխանցել ուրիշներին՝ նախքան ախտանիշներ ունենալը:

Կարանտին Պահպանելու Ցուցումներ

Երբ դուք կարանտինի մեջ եք, դուք չեք կարող հեռանալ ձեր կարանտինի վայրից, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է բժշկական օգնություն ստանալ կամ COVID-19-ի թեստ հանձնել: Կրեք [բարձր պաշտպանության դիմակ](#), եթե պետք է գտնվեք ուրիշների, ներառյալ ձեր տան անդամների շրջապատում: Դուք պետք է հետևեք COVID-19-ի հետ սերտ շփում ունեցած անձանց հրահանգներին, որոնք հասանելի են անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով՝ <http://ph.lacounty.gov/covidquarantine>:

Կարանտինի Տևողությունը

Դուք պետք է մնաք տանը և հեռու ուրիշներից, COVID-19-ով ախտորոշված անձի հետ ձեր վերջին շփումից հետո առնվազն 5 օր և մինչև 10 ամբողջ օր, քանի որ կարող եք վարակված լինել COVID-19-ով: Ստորև տե՛ս մանրամասները՝ որոշելու համար, թե երբ կարող է ավարտվել ձեր ինքնակարանտինը:



- a) Դուք կարող եք ավարտել ձեր կարանտինը 5-րդ Օրվանից հետո, միայն եթե՝
 - Դուք շարունակում եք ախտանիշներ չունենալ և
 - Ստացել եք COVID-19-ի վիրուսային թեստի¹ բացասական պատասխան 5-րդ Օրը կամ ավելի ուշ վերցված նմուշից:
- b) Եթե չեք կարող թեստավորվել կամ որոշում եք չթեստավորվել և ախտանիշներ չունեք, ապա կարանտինը ավարտվում է 10-րդ օրվանից հետո:

Հիշեցում: Օր 0-ն վարակակրի հետ ձեր վերջին շփման օրն է: 1-ին օրը վարակակրի հետ ձեր վերջին շփմանը հաջորդող առաջին ամբողջական օրն է:

Խնդրում ենք նկատի ունենալ, եթե դուք բավարարում եք նախքան 11-րդ Օրը կարանտինը ավարտելու չափանիշները, ապա **ձեզնից պահանջվում է շարունակել հետևել ձեր առողջական վիճակին, և դուք պետք է շարունակեք կրել բարձր պաշտպանության դիմակ ուրիշների շրջապատում՝ հատկապես փակ տարածքներում գտնվելիս 10 Օր: Բացի այդ, աշխատանքի վերադառնալու համար ձեզնից պահանջվում է կրել դիմակ վարակի հետ շփման օրվանից հետո ընդհանուր 10 օր:**

2. Եթե Ձեզ Մոտ Առաջանան COVID-19-ի Ախտանիշներ և/կամ Ստանաք Վիրուսային Թեստի Դրական Պատասխան

Եթե վարակված անձի հետ վերջին շփումից հետո 10 օրվա ընթացքում ձեզ մոտ առաջանա COVID-19-ի որևէ [ախտանիշ](#), դուք պետք է անհապաղ ինքնամեկուսանաք (մնաք տանը կամ այլ բնակավայրում և հեռու ուրիշներից) և հանձնեք COVID-19-ի վիրուսային թեստ¹: Հորդորվում է, որ դուք դիտարկեք բուժաշխատողի, կլինիկական խորհրդատվական գծի կամ հեռաբժշկության մատակարարի հետ կապ հաստատելը՝ բժշկական գնահատման և հնարավոր բուժման համար: Շարունակեք կրել **բարձր պաշտպանության դիմակ այլ անձանց շրջապատում գտնվելիս առնվազն 10 Օր:**

Եթե COVID-19-ի ձեր թեստի պատասխանը դրական է կամ եթե ձեր բժշկական մատակարարը կարծում է, որ դուք վարակված եք COVID-19-ով, **շարունակեք կրել դիմակ և** հետևել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության [COVID-19-ով Պայմանավորված Շտապ Մեկուսացման Հրամանին](#) և COVID-19-ով Վարակված Մարդկանց Համար Տնային Մեկուսացման Հրահանգներին, որոնք հասանելի են անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով՝ <http://ph.lacounty.gov/covidisolation>:

ՀՐԱՄԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Հրամանի նպատակն է օգնել դանդաղեցնել COVID-19-ի տարածումը, պաշտպանել ավելի բարձր վտանգի տակ գտնվող անձանց և առողջապահական համակարգը՝ շտապօգնության սենյակներում և հիվանդանոցներում հիվանդների կուտակումներից: Վիրուսը կարող է հեշտությամբ տարածվել միմյանց հետ սերտ շփման մեջ գտնվող մարդկանց միջև, հատկապես եթե նրանք ամբողջովին պատվաստված չեն:

Մարդիկ, ովքեր պատվաստված չեն COVID-19-ի դեմ, գտնվում են COVID-19-ով հիվանդանալու և մահանալու ամենաբարձր վտանգի ներքո: Չպատվաստված տարեցները և չպատվաստված մարդիկ, որոնք ունեն [առողջության հետ կապված որոշակի խնդիրներ](#), գտնվում են COVID-19

¹ Թեստը պետք է լինի [FDA-ի կողմից թույլատրված](#) COVID-19-ի վիրուսային թեստ, ինչպես օրինակ՝ հակագենի թեստը կամ ՆԱԹ/ՊՇՌ (NAAT/PCR) թեստերը: Ընդունվում են ինքնուրույն կատարված թեստերը, սակայն եթե կատարվում են աշխատանքի վերադառնալու համար, ապա պետք է թեստավորմանը հետևող լինի և այն հաղորդվի հատուկ կարգով: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [Cal/OSHA-ի Թեստավորման Վերաբերյալ ՀՏՀները](#): Հարցրեք ձեր գործատուից՝ ինչպես թեստավորվել:



հիվանդությունով ծանր հիվանդանալու (ավելի հավանական են հոսպիտալացվելը, ուժեղացված խնամքի, շնչելու համար օդափոխիչի կարիք ունենալը կամ մահանալը) ամենաբարձր վտանգի ներքո: [Թուլացած հիմունային համակարգ](#) ունեցող մարդիկ, ովքեր ամբողջովին պատվաստված են, կարող են այնքան էլ լավ չարձագանքել պատվաստանյութին, ուստի, հնարավոր է՝ նրանք նույնպես լինեն ծանր հիվանդանալու վտանգի ներքո: Omicron ենթատեսակի առկայության դեպքում լիովին պատվաստված մարդկանց ավելի մեծ տոկոսը կարող է վարակվել և իրապես վարակվում է: Այնուամենայնիվ, լիովին պատվաստված և խթանիչ դեղաչափը ստացած անձինք լավ պաշտպանված են COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց և մահանալուց: Հատկանշական է, որ պատվաստմանը հաջորդող այս վարակները սովորաբար առաջացնում են միայն թեթև ախտանիշներ, եթե այդպիսիք ընդհանրապես առաջացնում են: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ ամբողջովին պատվաստված մարդիկ վիրուսը տարածեն ուրիշ մարդկանց:

Սույն Հրամանը հիմնված է ներկայումս հայտնի և մատչելի գիտական ապացույցների և լավագույն փորձի վրա: Մեկուսացումը և կարանտինը խորհուրդ են տրվում Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների (CDC) և հանրային առողջության այլ մասնագետների կողմից՝ որպես COVID-19-ի տարածումը կանխող ապացուցված ռազմավարություն:

ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԺ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Պատասխանատուի այս Հրամանը ստեղծվել է Կալիֆորնիայի Առողջապահության և Անվտանգության Օրենքների 101040, 101085, 120175, 120215, 120220, 120225 և 120295 և Լոս Անջելեսի Շրջանի Օրենսգրքի 11.02.030 Բաժինների իրավասության ներքո: Առողջության Պատասխանատուն կարող է հավելյալ գործողություն(ներ) ձեռնարկել, որոնք կարող են ներառել քաղաքացիական կալանք կամ պահանջ, որ տվյալ անձը մնա առողջապահական հաստատությունում կամ այլ վայրում, կամ վարչական տուգանք՝ պաշտպանելու հասարակության առողջությունը, եթե սույն Հրամանին ենթակա անձը խախտի Հրամանը կամ չենթարկվի դրան:

ԱՂՔՈՒՐՆԵՐ

- COVID-19-ով վարակվածների հետ Սերո Շփում Ունեցածների Կարանտինի Հրահանգներ՝ <http://ph.lacounty.gov/covidquarantine> (անգլերեն և այլ լեզուներով) <http://ph.lacounty.gov/covidcuarentena> (իսպաներեն):
- Աղբյուրներ, եթե դուք ստացել եք COVID-19-ի վիրուսային թեստի դրական պատասխան, և/կամ բուժաշխատողը կլինիկորեն կասկածում է, որ դուք վարակված եք COVID-19-ով՝*
- Տեսչին Մեկուսացման Հրահանգներ COVID-19-ով վարակվածների Համար՝ <http://ph.lacounty.gov/covidisolation> (անգլերեն և այլ լեզուներով) <http://ph.lacounty.gov/covidaislamiento> (իսպաներեն)
- Հանրային Առողջության Վարչության Շտապ Մեկուսացման Հրաման՝ http://ph.lacounty.gov/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Isolation-Armenian.pdf (հայերեն) <http://ph.lacounty.gov/Coronavirus/reopening-la.htm#isolation> (անգլերեն և այլ լեզուներ)



ՀՐԱՄԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Եթե այս Հրամանի հետ կապված հարցեր ունեք, զանգահարեք Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Վարչություն՝ (833) 540-0473 հեռախոսահամարով:

ՍՈՒՅՆՈՎ ԿԱՐԳԱԴՐՎԱԾ Է՝

5/18/2022

Muntu Davis, M.D., M.P.H.

Առողջության Պատասխանատու,
Լոս Անջելեսի Շրջան

Ամսաթիվ